



ԲԵՐԲԵՐՏ ՏԱՐԻ



ԹԻՒՆ 34

3/16 ՄԱՐՏ 1912

ԿՐՕՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ

ՇԱՐԱԹԱԹԵՐԹ

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԻ ՊԱՏՐԻԱՐԺԱՐԱՆԻ



«ԿԱԹՈՂԻԿԷ ԱՐՁԱԳԱՆԳ», Հայ Կաթողիկէ Պատրիարքարանի պատօնական Շաբաթաբերթը, փոխադրուած է ի Կ. Պոլիս, եւ կը սկսի հրատարակուիլ առ այժմ 16 մեծադիր հօրէք բաղկացած եւ ճոխ բովանդակութեամբ. ունենալով նաեւ տեղեկութեանց բաժին մը, որ կը պարունակէ կարեւոր եւ սոյոց ամէն լուրերն՝ համառօտուած. որով եւ մեծ դիւրութիւն կ'ընծայէ ընթերցողներէն անոնց մանաւանդ որոնք առհասարակ ժամանակ չունին օրաբերթեր կարդալու:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՆ ԵՆ

Թուրքիոյ համար.

Տարեկան. Դհեկ. արծ. 40

Վեցամսեայ » » 20

Արտասահման.

Տարեկան. Ֆրանկ 10

Վեցամսեայ » 5

Բաժանորդագրութիւնք կանխիկ կը վճարուին Մանդատ-Բոսորդ եւ կամ մէյ մէկ դրոնոց նամակադրուելով:

Մէկ թիւ 1 Դահեկան

Նամակ, յօդուած, եւն. կը դրկուին խմբագրութեան հասցեին.
ԿԱԹՈՂԻԿԷ ԱՐՁԱԳԱՆԳ

Պատրիարքարան Կաթողիկէ Հայոց
Բերա Կ. Պոլիս

Katoghighe Arzakank
Patriarcat Arm. Catholique
Péra Constantinople

ԾԱՆՈԹ. 1.— Ահլ-է-Նի կը հրատարակուի Շաբաթ օրերը:

2.— Խմբագրութիւնս պարտաւորեալ չէ անպատճառ կամ նոյնութեամբ հրատարակել իրեն դրկուած ո եւ է յօդուած:

3.— Ձեռագիրներ ետ չեն դարձուիր:

4.— Յօդուածներու ձեռագիրները պէտք է գրուած ըլլան թուղթին մէկ կողմը միայն:

5.— Ծանուցմանց համար մամնաւոր պայմանագրութիւնք կը կատարուին:



ԿԱԹՈՂՈՍԷ ԱՐՁԱԳԱՆԳ

ԿՐՕՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ

ՇԱՐԱԹԱԹԵՐԹ

Երկրորդ Տառի

3/16 Մարտ 1912

Թիւ 34

ԱՏԼԻՅԷ ՎԷ ՄԷԶԱՅԻՊ ՆԷԶԱՐԵԹԸ ԱՆՅԵՍԻՆԷ

ԷՐՄԵՆԻ ԳԱԹՈՂՈՒԹ ԲԱԹՐԻԳԻՍԱՆԷՍԻ ԹԱՐԱՖԸՆՏԱՆ

ԹԱԳՏԻՍ ԳԸԼԸՆԱՆ ՄՈՒԽԹԻՐԷ

Գ.

Միւսինչ օրան քիւրտիէր իջիւն Բօմասա իճրա իտիլէն՝ ելնի օն Բիսգորտարըն ինթիխապաթ վէ ըէսմի թագախալէրինէ կէլինճէ, գաթօլիք ալէմինին ըէխի էքպէրինի վէ փիսգորտարըն ըիսգորտար օրան Հաչմ, Բարա հագրէթլէրինի պունա սէվգ խաէն սէպէպ շու աըր. քիւրտի շէրիֆ լաթրիզլէրլէ ըիսգորտարըն ինթիխապաթընտա գապիլի ինթիխապաթ պաղը նամգէտլէրին լիթասընը Սինոգ մէճլիսինէ թագախալ իթմէք իմթիյոզընը Գաթօլիք ճէմաաթընա իհսան իթմիչ իսէ սէ, անճագ պունա պիր հագգը

միլլի նազարըյլա պագըրմայըպ, հիւննի շահատէթ մագամընտա իթա օլունտըը մալիւմ տիր, վէ շուրասը տախի աշիքիար տըր քի իշպու իմթիյազը բաբալըգ մագամընտան թախին օլունան հուտուտ խարիճինտէ իմթիմալ իթմէք տախյէսինտէ պուլունըր խէ եալընըգ մէզըրուր իմթիյազըն մէվզուր լէհինէ տէյիլ իլլա աաըլ իմթիյազա սա խալէլ կէթիրմիշ օլուր, եալընըգ Գաթօլիք Քիլիսէյի բիյասէթը բուհանիյէսի թարաֆընտան տէյիլ, իլլա տիւնեանըն պիլճիւմէ տէվլէթլէրի ճանիպլինտէն իթա օլունան իմթիյազաթը թէսվիր խալէն էսասաթ պէօլէ տիր. շու շիմսիքի պէյանաթընըգ միւմուիլէյիւմ բիսգոբուլարըն էհալինին մէտիւլի օլմագընզըն իճրա իտիլէն ինթիխապաթը իւզէրլինէ մուհաիլէյիւմին բէմու թագախի ալէյիւնտէ իյգա օլունան միւշքիլաթըն հալլինի իրայէ իտէր, ֆիլվազը բաթրիգլիքտէ օն բիսգոբուս մագամը միւնհալ գալմը խալ. ֆըրգաի մուխալիֆէ՝ Բաթրիգ թէրգհան էֆ. ալէյիւնտէ իլանը խուտուլէթ իթմէսի ճիհէթիլէ նաւդէսլէրին լիսթասընը իպրազ իթմէք իմթիյազընը սուի իմթիմալ իտէրէք եէնի բիսգոբուլարըն թախինինէ մանի օլուօրսը. անըն իշլան Բարա հազրէթլէրի քէմալը Ըֆֆէթ Վէ հիքմէթլէրիլէ պու տէֆա միւսթէնա օլարագ մուսալիլէյիւմ ինթիխապաթընա իպթիտար իտիլմիշ տիր: Շուրասը ճայի սիւալ տըր քի, աճապա պիր իմթիյազըն սէրպէսթիի իճրաընը իպթալ իթմէք սէլահիլէթլինի, անը իթա վէ իհսան խալէն մագամտան օլ իմթիյազ նէզի՝ խալիլիթ մի. վէ աճապա շէրէֆ-սասըր օլան պիր իմթիյազ քէնտիսինի փայմալ իթմէքիլըն գաթը ագտէսը Բատիլահիլին հիւքմի ճէլիլինի իմհա խալիլիթ մի: Իշթէ պու սէպէպտէն տօլայը Բարա հազրէթլէրի Գաթօլիք Քիլիսէյիլի պու հալը միւշքիլտէն խէլաա իթմէք իւզրէ միւսթէնա օլարագ պու տէֆա օլ հագըը հիւքիւմտարանէսինի իմթիմալ էյլէմիշ տիր:

Կէլէլիւմ շիմսի Գաթօլիք ճէմաաթընտա մէվճուտ օլան Բաթրիգ-խանէ էմվալի մէսէլէսինէ քի ինթիլաֆ ֆըրգասը խասիմլէրի էմվալը մէզքիւրէ խաարէ վէ միւրազըրպլսինին միլլէթէ ալիա օլտըլընը խոտաա էյլէմէքտէ տիր: Մալիւմ տիր քի պիգտէ Բաթրիգիտանէ էմվալի իքի սընըֆ օլուպ, պիր սընըֆը բաթրիքլիք վէ բիսգոբուլըգ բուհանի մագամընտա ալիա օլան էմվալ վէ տիկէր սընըֆը սա միլլէթէ բաճի պուլընան էմվալը միլլէյէ տիր:

Պիրինճի սընըֆ էմվալ միլլէթին մալի օլմագ մագստտըյլա վիւճուտէ կէթիրիլմէյիպ, անճագ եալընըգ անըն խայրընա թէէսիա իտիլմիշ, վէ շիմսիյէ գատար միւսթադիլէն բիյասէթի բուհանիյէ թարաֆընտան խաարէ օլունմըջ օլան պիլճիւմէ էմվալ, նուգուտ վէ պարիթտէն իպարէթ օլուպ, ճէմաաթըն միւտալտէլէ վէ միւրազըրպլսինտէն արի վէ պէրի պուլունանլար տըր:

Խարիճտէն իթա օլունան հիպէ վէ խանէլէրէ կէլինճէ ճէմաաթըն քէնսի վէրմէմիշ օլտըլը էմվալ վէ նուգուտաա հագըը միւտալտէլէսի օլ-


մատուցողը կիպի, ասհապը խայրաթ սախի խտարէսինի միւսհասորէն մա-
գամաթը բուհանիւյէյէ թէվաի իթմիւ օլտըզարը էմվալ վէ հուգուտա-
րընըն ավամ թարաֆընտան խտարէ վէ միւրազըպէ խաիւմէսինի գաթիէն
գապուլ խտէմէզ :

Էրմէնի Գաթօլիք ճէմաթընըն քէնտի խանաթըյա մէյաանա կէ-
թիրմիւ օլտըզը էմվալը միլլիւյէյէ կէլինճէ, պուհար տաիմա մազիտէ օլ-
տըզը կիպի, էլհալէթի հազիհի սախի սվամտան միւրէքքէպ վէ խա-
րէ մէճլիսի թարաֆընտան միւսթէխէպ հէյէթլէր մարիֆէթիւյէ գալանիյ-
նի աէվլէթը Օսմանիւյէյէ թէվֆիզէն Բաթրիզին ըյասէթ վէ հէզարէթի
թանթընտա օլտրագ վէ ճիհէթի բուհանիւյէթիտէ միւսհասորէն Բաթրիզ
վէ մահալի բիսգուտարընա ալիտ վէ բաճի օլտրագ խտարէ խոիւմիւ վէ
խաիւմէքտէ պուլունմըլ տըր :

Մամաֆիհի Բաթրիզ հազրէթլէրիւյէ Սինոդ մէճլիսի քէնտի ճէմա-
տթարընա գարչը պէպէտիքլէրի աւալը սուհճուլանէյէ պիր աէլլի վէ խ-
պաթ օլմագ իւզրէ Հիւքիւմէթի Օսմանիւյէ թանթընտա օլտրագ պիր աւն
էվլէլ հէթիճէլէնտիքէպլիմէք իչլւն էվլէլ էմրտէ քեաֆֆէի էֆալ վէ հա-
րէքևաթը իլլիլչալքեարանէնլն վէ թէհաթաթ վէ թազեիգաթըն էօնիւ
ալընմաալը չարթըյա, վէ Ասլիյէ վէ Մէզահիպ հէզարէթինլն օլ պապտէ-
քի գալանիյնլն թէվֆիզէն պիր հիզամնամէի միլլի թանդլիմի զըմնըն-
տա Գաթօլիք միւթէհալիզանը բէհապլիյն վէ միւթէպէրանընտան միւրէք-
քէպ պիր գօմիսիօնլա միւսասէպաթ վէ միւզաքէրաթա կիրիւմէյէ հազըր
վէ միւհէյեա օլտըզարընը Պապը Ալիյէ ալէնէն արզ ու պէյան խտէրէր :



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽՆԴԻՐՆ ՈՒ ԱՆՈՐ ՏԱՐԲԵՐ ՓՈԻԼԵՐԸ



Osservatore Romano քերթիմ յօդուածագիրը իւր խոսացած յօդուածը հրատա-
րակած է, զոր ասեմ կը դնենք քարգմանելով:

Երբ, քանի մը օր առաջ ընդարձակօրէն կը համառօտէինք Հայ
Եպիսկոպոսներուն իրենց ժողովուրդին ուղղած առաջին հաւաքական
թուղթը, իւր վերջաբանն Հռովմի մէջ նորոգ գումարուած Սինոդոսին,
ըսինք թէ ինչպէս անոնք իրենց հասարակութեան ուղղած երկրորդ
թուղթով մը պատշաճօրէն պարզած ու մեկնած էին հայկական խնդրոյն
տարբեր փուլերն, որու մասին վերջերս այնքան խօսուեցաւ, ի մասնաւո-

րի այն աղմկարար միջադէպերուն պատճառաւ՝ որոնք տեղի ունեցան նորընտիր Պատրիարքին Գերերջ. Պօղոս Պետրոս ԺԳ. Թէրզեանի ընտրութեան պահուն կամ անկէ վերջ :

Այս երկրորդ թուղթին մէջ՝ ուր ի մասնաւորի կը խօսուի անոր յարգելի անձին, անոր գործերուն ու պատասխանատուութեան վրայով, մինչ առաջնոյն մէջ սոսկ կը խօսուէր Սինոդոսի աշխատութեանց վրայով, չտեսնուիր Անոր ստորագրութիւնը, այլ միայն Սինոդոսական Հայրերունը՝ որոնք համառօտ նախաբանի մը մէջ կուռ կերպով կը բացատրեն այս կարեւոր յիշատակագրին նիւթն ու նպատակը :

Նախ ակնարկելով այն գրգռման վիճակին ուր ոմանք կը ջանան բռնել իրենց հասարակութիւնը, և հետեւաբար կացութիւնը լուսաբանելու ստիպիչ պէտքին, եպիսկոպոսները կը յաւելուն. «Ամիսներէ ի վեր կ'աշխատուի ինչպէս մի մէջ՝ այսպէս ալ օտարներու քով, վարկաբեկ ընկող Պատրիարքը՝ իբր միակ պատասխանատուն այս... ճգնաժամին, ինչպէս կը յորջորջուի Ո'չ մէկ կասկածի, ո'չ մէկ նախադասութիւն, ո'չ մէկ զրպարտութեան չի խնայուիր, և ամէնէն սեւ գոյներով կը ներկայացնեն զանի : Իսկ մի օտարազգի բարեկամներն ալ ստէպ կը կրկնեն մեզի. «Բայց մի անգամ ցոյցաւ պատասխան մը տուէք նմանօրինակ նախատանաց դէմ :» Մենք սակայն համըրութեամբ կ'պատե՛նք որ Սինոդոսը իրեն իրենց իսկական գոյներով ներկայացնէր, արդ հիմա կը պատասխանենք ոչ թէ օտարներու, այլ միւր իսկ ժողովուրդին սիրոյն համար՝ որ կատարելապէս խաբուած է այս բանին մէջ :»

Եւ յայտարարելով թէ կը սխալէր այնպիսին՝ եթէ ո'ւ է մէկին դէմ անարգական կամ վարկաբեկիչ ակնարկութիւն մը նշմարել կարծէր իրենց խաբերուն մէջ, թէ աղգային ժողովին վրայ խօսելով իրենք բնաւ մոռաքէ անգամ անցուցած չեն անոր բոլոր անդամներուն հաւաստրապէս գէշ դիտաւորութիւն վերագրելու, թէ՛ մասնաւոր համոզուած իսկ են՝ որ շատ բարի անձեր կան նոյն ժողովոյն մէջ, որոնք յստակօրէն չեն ըմբռններ սակայն կացութիւնը, և որոնց մեծ լոյս մը պիտի ընծայէ հանդարտ վիճաբանութիւնը, կ'ըսեն թէ «այս տխուր պատմութեան մէջ խորարմաս կը տեսնուին բոլոր այն մոլոր դադափարները որոնք շատ մը տարիներէ ի վեր յուզած են իրենց ընկերութիւնն ու սպառնացած իրենց Եկեղեցւոյն : Եւ հիմա անոնք հասուննալով՝ իրենց բնական եղած պտուղը տուած են այս գժտութեանց մէջ :» Եւ որովհետեւ պատմութիւնը, ինչպէս կ'ըսեն անոնք, կը ներկայանայ հոս ստուգիւ Լեւոնթի ուսուցիչը, անոր համար Արհի. Եպիսկոպոսունք կը ջանան պարզել իրենց ժողովուրդի առջիւ ինչորոշ ծագումը, անոր սարքեր փութիւր, անկէ յառաջ եկած վէճերը, պարզ ու մեկին ուսումնասիրութեամբ մը՝ զոր հոս կարելի եղածին չափ պիտի ջանանք համառօտել :

Եւ այս ամփոփոյքը աւելի կատարեալ ընելով հանդերձ, հոս մեզի

սրամադրելի եղած լրագրական սահմանէն անդին չանցնելու համար, և րիք մասերու կը բաժնենք զայն, գրեթէ քայլ առ քայլ հետեւելով յիշ- հալ Նախկալուածաց թուղթին խմբագրութեան, այսինքն թէ՛ այսօրուայ թիւին մէջ պարզելով վէճին ծագումը. երկրորդի մը մէջ խօսելով անկէ վերջ Պատրիարքին ու Ազգային ժողովին միջեւ տեղի ունեցած յարաբե- րութիւնները, և արդի խղումէն յառաջ ու վերջը պատահած միջադէ- պերը. իսկ երրորդ ու վերջին յօդուածի մը մէջ մեզի վերապահելով հա- մառօտելու այն ընդհանուր դիտողութիւնները՝ զորս նոյն այն Սրբազան հովիւները կ'ըսեն դէպքերը յառաջ բերելէ վերջը:

Որո՞նք են ուրեմն վէճին սկզբնապատճառները:

Պատրիարքը Հայ-Կաթողիկէ հասարակութեան պրուին ըլլալով, ու միեւնոյն ասան ճոխացած՝ քաղաքական իշխանութեամբ, անհրաժեշտ էր և է ալ որ օրէնք մը գտնուի Պատրիարքին ու ժողովուրդին միջև ըլլա- լիք յարաբերութիւնները ճշդող. արդ խնդրոյն ու բոլոր խռովութեան սկզբնապատճառը այս կանոնագրութեան խմբագրութեանը մէջ կը կա- յանայ:

Նախորդ Պատրիարքներէն մին փորձեց Ազգային ներկայացուցիչ- ներու խորհրդակցական մարմնոյն սահմանադրական ձև մը և պատշաճ կանոնագրութիւն մը սալ, որ ո՛չ կառավարութենէն, ո՛չ Սինոդոսէն, և ո՛չ Հռովմէ ճանչցուեցաւ: Նոյն այն ծրագրին հեղինակն անգամ զայն իբր փորձ մը նկատեց, ու գրեթէ բնա՛ւ չգումարեց այս կերպ կազմուած ժողովը, ու սոսկ ապրտամ գործելու ասպարէզի մը մէջ թոյլատրեց որ ան չարժի: Յետոյ միեւնոյն Պատրիարքը, սրբազրութիւններ մը ու փո- փոխութիւններ մըն ալ մտցուց՝ զորս զեկոյց նաև Կառավարութեան և Նախկալուածներուն յատուկ շրջաբերականով մը, և որ կը կազմէ նոյն ծրագրին վերջին կիսիւքը:

Եւ թէպէտ այս ծրագիրը իրապէս դոյութիւն չունի, քանի որ ո՛չ մէկ իշխանութիւնէ մը չէ հաստատուած, սակայն առժամեայ հիմ մը նը- կատուեցաւ ան, և ի մասնաւորի Սահմանադրութենէն ետքը ուղեցին որ այդ ծրագրին սրամագրութեանց համաձայն տեղի ունենային նոր ժո- ղովոյն ընտրութիւնները:

Այս ընտրութեանց պահուն էր որ, ամբողջ, մեծագոյն մասամբ զուեհիկ ժողովրդէն և պանդուխտներէ բաղկացած, բռնութեամբ յարձա- կեցաւ Պատրիարքարան՝ ուր քուէարկութիւնը տեղի կ'ունենար, և խոր- տակեց քուէտուփերը, սպառնալիքով ու ահաբեկելով ստիպելու հա- մար որ այս խռովարարներու պետերուն կողմանէ պատրաստուած ցան- կին համաձայն քուէները տրուէին: Պատրիարքն ալ ստիպուեցաւ տեղի տալ բռնութեան սուջէ: Վախի ու սպառնալիքի աղղեցութեան ներքեւ եղած նման ընտրութիւններ, հասարակօրէն ոչինչ կը նկատուին. բայց և

այնպէս այս կերպ ընտրուած ժողով մը դարձեալ թոյլատրուեցաւ գոյութիւն ունենալու :

Քիչ ետքը, Սապպաղեան Պատրիարք հրաժարելով, նոր Պատրիարքի ընտրութեան համար Սինոդոսը գումարուեցաւ ի Պոլիս : Հինգ ամիսներ անցան ապարդիւն, առանց նոյնիսկ ընտրութեան նախապատրաստական քայլն առնուլ կարենալու, ինչու որ ժողովը չէր ընդուներ ընտրելիներու ցուցակը, ու ժամավաճառ կ'ըլլար վիճելով թէ հարկ էր արդեօք կանոնադրութիւնը քննել առանց Պատրիարքի, եթէ նախ Պատրիարքի ընտրութիւնը կատարել : Վերջապէս, երկարաձիգ ու ցաւալի վիճաբանութիւններէ ետքը, ժողովը ամօթալի դիրք մը բռնելով Սինոդոսի հանդէպ, ասիկա ի սէր խաղաղութեան ու վերջացնելու համար Պատրիարքի ընտրութիւնը, խոստացաւ ընտրութենէն անմիջապէս ետքը զբաղելու կանոնադրութեան ծրագրով : Եւ իրօք, երբ վերջացան ընտրութիւնները, և Պատրիարքը հասաւ իր Ատանայի թեմէն, Սինոդոսը տրամադրութիւն յայտնեց ծրագիրը քննելու :

Բայց յանկարծակիի եկաւ ու ապշած մնաց՝ երբ տեսաւ որ այն համբաւաւոր ծրագիրը պատրաստուած անգամ չէր : Վերջապէս ներկայացուցին ձեռագիր մը՝ որու համար կ'ըսէին թէ ուսումնասիրուած Ձեռագիրն էր, թերթատուած թուղթերու վրայ, այնքան սրբազրութիւններով ծեփուած՝ որ զայն քննելու համար Պատրիարքէն ընտրուած յոնձնաժողովին մէջ, գրութեան հեղինակն անգամ չէր կրնար կարդալ :

Ասկէ երեք ամիս ետքը միայն ծրագիրը տպագրութեան յանձնուեցաւ : Բայց նոյն պահուն, Յանձնաժողովին երկու քահանայ անդամներէն մին հրապարակաւ բողոքեց տպուած ծրագրին դէմ. ըսելով թէ բնագիրը բոլորովին խեղաթիւրուած էր. զի անոր մէջ բնա՛ւ նկատի առնուած չէր Յանձնաժողովին որոշումներն ու քմահաճ փոփոխութիւններ մը ներմուծուած էին : Յանձնաժողովին անդամներէն հակառակողներ հղան այս բողոքին, առանց սակայն զայն հերքելու, բայց և այնպէս նախնական բնագիրը մէջտեղ չեկաւ :

Յանձնաժողովը ուրիշ նիստեր ալ ունեցաւ, և տարբեր դիտողութիւններ ըրաւ տպուած ծրագրի մասին, որոնք չարժանացան սակայն աշխարհական անդամներու հաւանութեան : Եւ որովհետեւ կարելի չէր լուրջ քննութիւն մ'ընել և լիակատար վճիռ տալ ներկայացուած ծրագրի մասին առանց աչքի առջեւ ունենալու անոր ամբողջութիւնը, և միւս կողմէն քննութեան չատ երկարաձգուելու վախն ալ ըլլալով, քանի որ Եպիսկոպոսները կ'աճապարէին վերադառնալ իրենց թեմերը՝ ուսկից երկար ատենէ ի վեր բացակայ կը գտնուէին, համաձայնութիւն գոյացաւ որ ծրագիրը տպագրուելով Եպիսկոպոսաց քննութեան ենթարկուէր : Պատրիարքն ալ ընդունելով այս համաձայնութիւնը սպասեց համբերութեամբ ծրագրին տպագրութեանը :

Այդ, երբ տպագրուած ծրագիրն ընդունեց Պատրիարքը, անմիջապէս զայն Եպիսկոպոսներուն հաղորդեց 1911 Յունուար 17 թուակիր չրջաբերականաւ, որուն մէջ նոյն վայրկեանէն կը զգուշացնէր զանոնք ըսելով. «Ինչպէս պիտի տեսնէք, ծրագիրը խմբագրող Յանձնաժողովին իսկ խոստովանութեամբ՝ անոր մէջ կան կէտեր մը որոնք ո՛չ Եպիսկոպոսներէն ո՛չ ալ Սինոդոսէն պիտի կարենան ընդունուիլ. զի թէ՛ եկեղեցական օրինաց ու կանոնական կարգապահութեան հակառակ են անոնք և թէ՛ որովհետեւ եկեղեցական ու հոգեւոր խնդիրներու միջամուխ կ'ըլլան աշխարհականք:»

Եւ իրօք շատ չանցած յայտնի եղաւ թէ անընդունելի էր այս ծրագիրը, և այս համոզումն ալ սուղ ժամանակուայ մէջ հաստատուեցաւ Հաւատոյ Տարածման Ժողովոյն 14 փետր. 1911 թուակիր մէկ նամակէն, որուն մէջ, նկատի առնելով որ Պատրիարքը այդ ծրագիրը Եպիսկոպոսաց հաղորդելու յանձնառու եղած էր «որպէս զի ասոնք քննէին զայն, և ընէին իրենց դիտողութիւնները անոր մէջ գտնուած յօդուածներուն վրայ» կ'աւելցուէր. «Խնդիրը սոսկ անոր վրայ չէ որ բարեփոխուէին սա կամ նա յօդուածները, այլ հիմնական սկզբանց և օրինաց շուրջ կը դառնայ խնդիրը. և Կաթողիկէ Եկեղեցական սկզբանց ու օրինաց մասին կարելի չէ ո՛րէն փոփոխում կամ իրաւախոհութիւն:»

Այսպէս Եպիսկոպոսներէ ոմանք գրաւոր կերպով հաղորդեցին Պատրիարքին իրենց գաղափարը՝ ծրագրին դէմ բողոքելով. այլք, Հաւատոյ տարածման Ս. Ժողովոյն նամակը կարդալէ վերջ զգուշացան ծրագիրը քննելէ. յետոյ ամէնը մէկ իմանալով Պատրիարքին չրջաբերականէն՝ թէ մօտ ատենէն Սինոդոս պիտի գումարուէր, այդ առթիւ վերապահեցին վերջնական պատասխան մը տալու: Ասկէ կարելի է եզրակացնել՝ թէ ո՛րքան անհիմն է Եպիսկոպոսաց հանդէպ եղած սա զրպարտութիւնը թէ անոնք դրժած են իրենց խոստման:

Այս է խնդրոյն առաջին փուլը: Երկրորդի մասին՝ յաջորդ յօդուածով մը պիտի խօսինք, միշտ հետեւելով Սինոդոսական Ս. Ս. Հարց ուղղած հաւաքական թուղթին:

ՎԵՆՅՈՐՈՐԾԻ ԼԱՐԻԲԵՐԱՄԵՆԱԿԸ

Ոչ միայն Կաթողիկեայ Գերմանիան՝ այլ կրնայ ըսուիլ բոլոր ողջամիտ Գերմանիան կը տօնէր այս տարի, 15 Յունուար, հարիւրամեակը

Վինիթհորսթի ծննդեան, այն մեծ և արտակարգ մարդուն, որուն նմանները հազուադէպ են երկայն դարերու շրջանին մէջ:

Վինիթհորսթի անունը կը յիշեցնէ մեզի գրեթէ ամբողջ պատմութիւնը կէս դարու՝ Գերման կրօնական քաղաքականութեան: Իսկ իր յիշատակը բնագոյրէն կ'արթնցնէ նաև յիշատակը այն երկաթեայ մարդուն՝ որ հեղինակը եղաւ Բոլշոյ-բոլաճի, այսինքն այն սոսկալի հայածանքին որու մէջ կ'ուղէր անյայտացնել Գերման Կաթողիկէ եկեղեցին, ըսել կ'ուզենք՝ Պիզմար:

Վինիթհորսթ ծնած էր 1812 յունուար 15, Օմնապրիւքի մէջ համեստ դիրքի տէր ծնողքէ մը՝ որ երկրագործութեամբ կ'ապրէր: 1848էն յառաջ, այսինքն Ստորին Նլպայի վրայ եղող երեք Դքսութեանց յիշափոխական շարժումէն առաջ, ազնուականաց ասպետական կարգին սէնաթքայի դատախազ անուանուած էր: Իսկ այդ դէպքերէ վերջ դատարանական ասպարէզի պաշտօնատարներու կարգն անցաւ: Երեք տարի վերջը, Հանսօլրի թագաւորին վստահութեան արժանանալով, կանչուեցաւ նախարարական պաշտօնի, և իրեն յանձնուեցաւ Արդարութեան նախաժողովիւնը, զոր պահեց մինչև 21 հոկտ. 1865, Բրուսիոյ մղած կըրպրասպան պաաերազմին նախօրեակը:

Գերման կայսրութեան կազմութենէն, այսինքն 1871էն ի վեր, Լուդովիկոս Վինիթհորսթ ձեռք առաւ կազմակերպութիւնը Գերման կաթողիկէներու մեծ կուսակցութեան մը՝ զոր այնքան յաջող կերպով վարեց ու ներկայացուց Ռայխսթակի մէջ մինչև իր մահը 1891:

Իր գործունէութեան այս բեղուն շրջանին մէջ իբր անոյեան ունեցաւ զՊիզմարք, որու կատարեալ հակոսեայ մէկ պատկերը կը ներկայացնէր ինք: Զի, մին՝ իր քաղաքական դաւանութեամբ կատարեալ սիպարն էր Բրուսիացի զինուորացած պաշտօնատարին, միւսը՝ ինքնավար դաշնակցական քաղաքացիին:

Ո՞վ կրնար հաւատալ թէ, այդ «մեծ աղապայի» կրկնոցին մէջ փակուած կարճահասակ ու զիրուկ, պղպլցող աչքերով բայց միամըտութիւն ու չարածճի հանճարով փայլիլուն երկու փոքրիկ աչքերով անձը այն ըմբիշն էր՝ որ տարիներէ ի վեր դէմ կը դնէր աշխարհի էն խորամանկ քաղաքագէտին, այն պետական անձնաւորութեան՝ որ կը վայելէր պաշտարանութիւնը թէ իր Վեհապետին ու թէ իր երկրին մէջ իշխող տարրին՝ ազգայնական ազատական կուսակցութիւնը: Այո՛, այս այն անձն էր՝ որ հակառակ Պիզմարքի նուրբ քաղաքագիտութեան, հակառակ իշխող կուսակցութեան ժահրին, հակառակ զինեալ ոյժին կրցաւ մէկ կողմէն ի դերե հանել հարուածները, քանդել ցիրուցան ընել լարուած թակարդները ու միւս կողմէն կազմակերպել Գերման Կաթողիկէներու մէկ կուսակցութիւնը որ այսօր Գերման կայսրութեան աջ թեւը կը կազմէ:

Վինիթհորսթ բախտաւոր եղաւ իր աչքով իսկ տեսնելու արդիւնքը

իր գործունէութեան: Գերման Կաթողիկէները, մէկ միայն քաղաքականապէս, այլ նաեւ կրօնապէս, կրթականապէս ու անտեսականապէս այդ մեծ մարդուն կը պարտին իրենց բոլոր յաջողութիւնները:

Վիլհէլմ Բ.ի կառավարութիւնը նոյնքան փութկոտ կը գտնուի եռանդուն ու գործոն դեր մը ունենալու ամէն անգամ որ առիթը ներկայանայ իր համակրանքը յայտնելու գերման կաթողիկէներու: Գերման Կայսրուհին ալ վերջերս շնորհաւորական հեռագրի մը պատասխանելով կաթողիկէ ընկերակցութեան մը, շատ մը դրուատալից խօսքերէ զատ իր հիացումը կը յայտնէր թէ ինչպիսի ղգալի յառաջդիմութիւն մը կը նըշմարտէր իր կաթողիկէ հպատակներուն մէջ, որուն սրտանց ուրախակից կ'ըլլար:

Եւ իրօք, եթէ նկատի աւնուի թէ 1860ին Պրէսլաւի նահանգին մէջ ուր կայ նաեւ մայրաքաղաքը Պէրլին, 41,000 էին միայն կաթողիկէայք, և սոսկ 19,000 Պէրլինի մէջ, մինչ այսօր 520,000 են անոնք նահանգին մէջ իսկ 275,000 Պէրլինի մէջ, մարդ չի կրնար իր ապշանքը սանձել:

Պէրլինի, ինչպէս նաեւ ամբողջ նահանգին մէջ, տարուէ տարի նորանոր եկեղեցիներ կը կառուցուին, իսկ այժմեան կրօնա-քաղաքական պայքարին մէջ՝ որ այնքան ուժգնօրէն կը ցնցէ միտքերը, գիտէ ամէն ոք թէ Սիլվիոյ հետ միասին, որու գլուխն ու սիրուն է Պրէսլաւի նահանգը, Պէրլինի Յօգրո-ն է հասարակական թէ առանձնական կենաց բոլոր խաւերու պատշաճեցնել կաթողիկէութիւնը իր ամբողջութեամբ:

Վիլնիձօրսթ հաւատքի մարդն էր, և իր սկզբունքները՝ կաթողիկէ եկեղեցւոյ անյիղի սկզբունքները եղան միշտ: Այդ վառ հաւատքն էր որ Վիլնիձօրսթի սուսաւ իր կորովը, և այն եռանդն ու քաջութիւնը՝ պաշտպանելու կրօնքը, իրաւունքն ու արդարութիւնը, հեղեղանման և անդիմադրելի սիրճախօսութեամբ: Այդ սկզբունքներն էին որ անսայթաք պահեցին իր քայլերը ամէնէն ճշնաժամային ու փշալից կացութեան մէջ անգամ: Չէ՞ որ Լուի Վէոյեօնէր, Օ'Տօննէքսեր, Տօնօզօ Գօրթէզներ, ա'Օնտէս-Ռէճճիօնէր ալ, որոնց դրութիւններն ու ճառախօսութիւնները ամբողջ ժողովրդային զանգուածներ կը բռնկցնէին, կենդանի մարմնացումներ էին եւս աւելի կենդանի հաւատքի մը:


Ո՛հ, ինչ գեղեցիկ բան, մինչև ցեալին չունչ պատերազմիէ վերջ մեռնիլ իրը ճամբիւր վրնուոր եկեղեցւոյ, իր հետ տանելով նաեւ նոյնիսկ իր թշնամիներուն յարգանքը: Ահա այս նախնաձեռի վիճակը վերապահուած էր Վիլնիձօրսթի: «Զբարւոք պատերազմն պատերազմեցայ, զընթացան կատարեցի. զհաւատան պահեցի»:

Վիլնիձօրսթ կը հանդէս այժմ Հանսլի Նօդը-Տամ եկեղեցւոյն մէջ զոր ինք իսկ կառուցանալ տուած էր անձամբ հանգանակութիւն ընելով:


Եկեղեցւոյն դրան առջև կը բարձրանայ իր իսկ ձեռքով նորոգ

տնկած գեղեցիկ կաղնի մը, պատկերը այն ոյժին, կորովին, տեւականութեան և այն հաստատութեան՝ որ իբր խորհրդանշ պէտք է ծառայէ Գերման կաթողիկէներուն:

Յարգանք իր յիշատակին...:



ՀԱՅ-ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԲՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐ



Տարօրինակ լուր մը կը չրջարեւուի թերթերու մէջ՝ վերջին երկուշաբթի օրէ ի վեր, իբրեւ թէ Նախարարաց Խորհուրդը կիրակի օրուան նիստին մէջ Ամեն. Թէրզեան Կ. Պատրիարքին Բալթիգո-լէնէ պաշտօնանկութեան վճիռ արձակած ըլլայ և զայն Կայսերական Խրատէով հաստատել տուած: Ժէճն Թէ-րք թիրթը և այլք հաստատեցին նաև թէ այս Խրատէն երեքշաբթի օր պիտի հաղորդուէր Հ. Կ. Պատրիարքարան: Արդ այսպիսի զեկուցում մը բնաւ անդի չունեցաւ ցարդ: Դիտելի է որ չորեքշաբթի օրէն սկսեալ թիրթիրը փոխեցին իրենց լիզուն, իբրեւ թէ այդ որոշողութիւնը կիրակի օրն չէ ստորագրուած եղեր նախարարներէն, և թէ չորեքշաբթի աւուր նիստին մէջ ստորագրուելով, պիտի մատուցուի եղեր արքայական հաճութեան: Այս զրոյցները ոմանց կողմանէ այլև այլ զգացումներու, մինչև իսկ կանխահաս Հնորհաւորութիւններու, ցայտուն և ցնծափիւռ դիտումնաւոր հրատարակութիւններու, մեկնաբանութեանց և ժողովական գումարումներու առիթ ընծայեցին: Անյարիր և կատարկապէս սխալ ենթադրութիւնք ևս հրապարակ հետուեցան, որոնց մին, իրաց անգիտակ անձերու յերևրանք, այն է թէ բաթրիկութեան պաշտօնանկութիւնը իբրեւ թէ կը ծնանի եղեր նաև Կաթողիկոսական պաշտօնին դադարումը: Հնար է թէ զայս այսպէս փափաքողներ գտնուին. բայց Կաթողիկէ հուրապետական սկզբունքներու պէտք է կատարկապէս անտեղեակ ըլլալ՝ սոյնօրինակ անհեղեղութիւն մը հաստատելու համար: Ժաճաճակ թերթին հինգշաբթի աւուր հրատարակած հեռագիրը պաշտօնական բաւարար պոտասխան մըն է այս տեսակ տգէտ յաւակնոտներուն. ահա՛. «Osservatore Romano», Վատիկանի օտկանը, Թէրզեանի հրաժարեցուցման մասին զրկուած հեռագրի վրայ խօսելով, կ'ըսէ. «Մինչև հիմա այս մասին ո՛ր է ուղղակի անդեկութիւն մը չստացանք, որպէսզի կարենանք հաստատել այս ծանրակշիռ լուրը: Ամէն պարագայի մէջ Պատրիարքէն մի միայն իր քաղաքային առանձնայնոր-

հումները առնուած են»։ — Իսկ Ուրբաթ աւուր Լաւարձակը հետեւեալը կը հրատարակէր.

«Երէկ, կէս գիշերէ ետք, Վիննայէն Պոլիս հասած մասնաւոր հեռագիր մը կը տեղեկացնէ թէ Հռովմի մէջ մեծ յուզում կը տիրէ այն լուրին վրայ թէ Նախարարաց Խորհուրդը պաշտօնանկ ըրած է Թէրզեանը։ Այս առթիւ ոչ միայն Պոլսը, այլ և Վասիկանի և Հռովմի բոլոր կղերը զայրացած են այս որոշման դէմ և նոյն իսկ Պապը, այս պարագան իրեն ուղղուած նախատինք մը նկատելով, սպառնացած է Պոլսոյ իր նուիրակը ետ կանչել, եթէ Նախարարաց Խորհուրդի որոշումը գործադրուի։ Խնդրին ստացած խիստ ծանրակշիւ հանգամանքին պատճառաւ, վիննական հեռագրական գործակալութեան մը Հռովմի թղթակցը ստիպողական կերպով լիառատ տեղեկութիւն ուղած է այս մասին։ Կ'ըսուի թէ Նախարարաց Խորհուրդը թերեւս Թէրզեանի պաշտօնանկութեան որոշումը Սուլթանին վաւերացման չլրկէ և խնդիրը հաշտարար եղանակով մը լուծէ։

Մեր կատարած քննութենէն կ'երեւայ թէ պաշտօնանկութեան Մալապիտան Նախարարաց Խորհուրդի սեղանին վրայ կը գտնուի դեռ»։

Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

Հ Ռ Ո Վ Մ

* Սրբգ. Քահանայապետը գեղեցիկ եւ կաթողիկէ եկեղեցական աշխարհին շատոնց ցանկալի կարգադրութիւն մը կատարեց։ «Divino afflatu» Սահմանադրութեամբ ժամկարգութեան մէջ նոր դասաւորութիւն ներմուծեց, որոյ զիտաւոր մասն այն է թէ սաղմոսարանը որ նախկին քրիստոնէից սիրելի աղօթագիրքն էր, շարաթուան մը մէջ ամբողջապէս պիտի քաղուի. որով մի եւ նոյն սաղմոսները միշտ կրկնելու ծանօթոյթը վերնալով, միշտ արթուն գուարթուն մտադրութեամբ պիտի կատարուի։ Այսու հանդերձ նաեւ համառօտուած է տեւողութիւնն ալ, վերածուկով շուրջ երեք քառորդ ժամու։

* Բիւզանդիոնի 1114 փետրուարի թուին մէջ «կաթոլիկ հատրիարք մը լունական եկեղեցին կը մտնէ» վերնագրով կաթողիկեայ Դպտիներուն նախկին հրաժարեալ Պատրիարքի՝ Մագարիոս Բիրիլլոնի նկատմամբ անցուղարձ մը մէջ կը բերէ, լռելով (կը հասկըցուի) ճիշդ կողմերը։ Իրաւ է թէ նա դիմում մը փորձեր է առ Յոյն եւ անոնցմէ զրկարաց ընդունուելու ամէն հրապոյն ունեցեր է, բայց զահալէմի բերան՝ անդրադառնալով իր սխալ քայլին վրայ, հեռացիր է Աղէքսանդրիայէ եւ կը գտնուի արդՀռովմ, բարձրագոյն մեծաւորաց տրամադրութեանց հպատակ։ Նոյն իսկ ոչ կաթողիկեայ Դպտիներ միացած իրենց համազօի կաթողիկէից, բուն զայրոթով վերաբերուեր են Տ. Բիրիլլոսի այդ անվախ ընթացքին դէմ, որ վիրաւորում մ'էր ոչ միայն ցեղային, այլ քրիստոնէական

արժանապատուութեան, քանի որ օրինապէս եւ իրապէս ձեռնադրուած, օծուած եպիսկոպոս մը նուաստացումն պիտի ունենար ոչ միայն իր ճշմարիտ դաւանութիւնը ոտնակոխելու, այլ նաեւ անվաւեր ճանչնալու իր բոլոր եկեղեցական աստիճանները, որոնց վրայէն երբեմն շուտիկէլ բարձրացումը կ'երեւի վտանգեր էր իր մէջ խոնարհութեան մեծ առաքինութիւնն, առանց որոյ՝ ճշմարիտ հաւատքի հաւատարիմ մնալ շատ դժուարին է: Ուրախ ենք այժմ որ իր կանուխ սթափումովն ծանր գայթակղութեան առջեւն առաւ եւ ինչայեց նոր վիշտ մը եկեղեցւոյ Դիտապետին, նախատինք մը քահանայական մեծ դասուն, անարգանք իր ցեղին, որուն անքան յոյսեր կը ժպտէին երբ Լեւոն ԺԴ.նոր պատրիարքութիւնը կը վերականգնէր Աղէքսանդրիոյ պատմական Աթոռոյն վրայ:

* * Արգիլեալ գրքերու ցանկին Ս. Ժողովին (S. Congr. dell' indice) նախագահ ծիրանաւորը հետեւեալ նամակն ընդունեցաւ.

Ամենամեծ խոնարհութեամբ կ'ընդունիմ զրաքննիչ Ս. Ժողովոյ այս տարուան Յունուարի 22 թուականաւ արժակած վճիռը, որով կը դատապարտէ «Բողոքականութեան սեղանաբեկութիւն» յորջորջուած գիրքս, եւ կը յայտարարեմ Ձեր Վսեմափառ Տէրութեան, իմ ամենախորին եւ ամենաանկեղծ հպատակութիւնս վերոյիշեալ վճիռն: Աստուած երկայն օրեր պարգեւէ Ձեր վսեմութեան»: Մատրիոն 19 փետր. 1912

Ձերդ Վսեմ. Տէրութեան Ամենախոնարհ ծառայ

ՎԷՆԱՆՑԻՈՅ ԴՕՆԶԱԼԷՉ

* * Կարգ. Մէրի տէլ Վալ Մարտ Յին եպիսկոպոսական ձեռնադրութիւնը կատարեց Արհի. Պոնցանոյին, որ Մէլիտեայ Արքեպ.ի տիտղոսով՝ Գահանայապետական Նրբւիրակ կարգուեցաւ Միացեալ Նահանգաց մէջ. ի մէջ այլոց ներկայ էին Արհի. Դոյունեան, Չէլէպեան, Միքիսեղեկեան, Թօփուզեան Հայ Արք. եւ եպ.ներն եւ Ռուսիոյ Հայ-Կաթողիկեայց Վարչի Սարգիս Դերապալժառ Տէր-Արքահամեան: Իսկ մարտի 10ին ձեռնադրեց զԱրհի. Սրաբինէլի, եպ. Լաւողիկեայ, որ անուանուեցաւ քահանայապետական Դեսպան ի Վիէննա:

Կ Ա Ք Ո Վ Ի Կ Է Ս Շ Խ Ա Ր Հ

* * Ինչպէս որ Լոնտրայէն կը ծանուցանեն, Միացեալ Նահանգաց նախագահ Պ. Թաֆթին քննին՝ թողով բողոքականութիւնը դարձած է ի ծոց Կաթողիկէ Ս. Եկեղեցւոյ: Հաւատոյ դաւանութիւնն ընդունեցաւ երեւելի Յիսուսեան Հայրն Բեռնարդոս Վոկան, եղբայր համանուն հանգուցեալ Կարդինալ Վոկանի որ Արքեպիսկոպոս էր Ռէտիմիսիսթրի (Լոնտրա):

* * Մատրիոն մայրաքաղաքին մէջ՝ յարքայական Մատրան մէջ Մարտ 2ին տեղի ունեցաւ վաղեմի աւանդութեանց համաձայն Մոխրոցի արարողութիւնը՝ հանդիսադրութեամբ Մօնս. Եազօմոյ Գարսօնա ի Թուր ի՝ որ Սպանական բանակին Ընդհ. Մատրանապետն ու Սիոնի տիտղոսաւոր եպիս.ն է: Ներկայ կը գտնուէին թագաւորն ու թագուհին, Ինֆանդա Թէրէզա, Ինֆանդէ Գարլոյ. Սպանիոյ Աւագանին, պալատական կիներն ու ընտրեալ բազմութիւն մը: Հոն էր նաեւ Առաքելական նուիրակ վսեմաշուք Կարդինալ Անդօնիոյ Վիգոյ:

Հանդիսադիր եպիս.ը ամէնէն առաջ Վեհապետներուն ճակատը դրոշմեց մոխրով:

ՀԱՅ ԿԱՌԱՂԱԿԻՆ ԳԱՏՐԱՐԱՐԱՐԱՆ

* Արհի. Յովս. Արք. Ռորոսեան, Կ. Պ. Փոխանորդ, անհանգիստ ըլլալով, բը-
ժիշկներն յանձնարարեցին երկու շաբաթ կատարեալ հանգիստ ընել, այր վասն քանի մը
օր անցուց Գաղղիացոց հիւանդանոցին մէջ. եւ շաբթու մը չափ ալ օգափոխութիւն պի-
տի ընէ ի Գատըքէօյ. ապա պիտի վերադառնայ իր պաշտօնին զուխը:

* Հրամանաւ Ամենապ. Հոգեւոր Տեառն՝ Տէր Կիրակոս Վ. Թիլքեան՝ Զմեառու
վանքէն, ուր սյծմ կը զսնուի, պիտի մեկնի դէպ ի Պէրէճիք, զատկական տօնախմբու-
թիւնները կատարելու համար:

* Կեսարիայէն բազմաստորագիր տեղեկագիր մը հասած է, որով համարէն ժո-
ղովորդը՝ յայտնելով իրենց հովիւն՝ Արհի. Անտօն եպ. Պահապանեանը ընդունած ըլլա-
լու համար անեղբ ուրախութիւն, միանգամայն շնորհակալութիւններ կը մատուցանեն
առ Ամենապ. Հոգեւոր Տէրն եւ Սինդոնն եւ Ս. Քահանայապետն, օծուած ըլլալուն հա-
մար զԿեսարիա այսպիսի հոգիից եւ խոհական մէկ Առաջնորդով: Նոյնպէս ամբողջ ժո-
ղովորդը աղբսագիր մը յուղարկած է առ նախարարութիւն Արդարութեան, զովաքա-
նելով իրենց Հովուին բարեմասնութիւններն ու խնդրելով որ ըստ օրինի Մուրախաս
կարգուի իրենց, շնորհելով Կայսերական բարձր ֆէրմանը: Ընդունելութեան հանդիսու-
թիւնները նկարագրող քանի մ'ընդարձակ տեղեկութիւններ հասան մեզ ի Կեսարիոյ,
որոնցմէ մին յառաջիկային մտաղիր ենք հրատարակելու:

* Անցեալ շաբաթ որ Ամեն. Հոգեւոր Տիրոջ նախագահութեան ներքեւ զուար-
ուեցաւ Կրօնական Ժողովն եւ զրադեցաւ Մուրատեան Անտոնի ամուսնական խնդրով:
Սա երկու տարի առաջ իր անկանոն ընթացքին համար բաժնուած էր իր ամուսինէն որ
իրեն դէմ դատ բացած էր Կրօնական Ժողովոյ առջեւ եւ Անտոն դատապարտուած էր
իր օրինաւոր կողակցին վճարել ամուսնոջակ մը: Ահա այս ծանրութենէն ալ ազատելու
համար, զիմած էր կրօնափոխութեան, յունաց եկեղեցին զիմելով: Քաղկեդոնի Մետրա-
պոլիտն թէ՛ զինքն ընդունած էր, թէ՛ իր ամուսնութիւնը լուծեալ հրատարակած եւ թէ՛
պարէնի թոշակի համար Հայ-Կաթողիկէ Պատրիարքարանէն տրուած վճիռը իրրեւ թէ
քեկած, եւ այնպէս տեղեկագրած առ Ասիկէ, որ եւ կը հարցնէր այս ամենուն վրա
Հայ-Կաթողիկէ Պատրիարքարանին ընելիք առարկութիւնները: Շատ պարզ էր սակայն
խնդիրը: Պատրիարքարանի մը հպատակ եղող մէկուն կրօնափոխութիւնը չկրնար քնա-
ստնանիլ անկէ տրուած վճույն, որ կը մնայ իւր զօրութեան մէջ՝ կրօնափոխ չեղած
կողման համար, եւ կը զործագրուի կառավարութենէն: Ուրիշ պատրիարքարան մը չլըր-
նար բողոքի կամ վճռաբեկ ատեանի դէրը կատարել, զոր չընէր եւ ոչ իսկ կրօնից պաշ-
տօնատուներ: Այս իմաստով պատճառաբանուած թագրիր մը տրուեցաւ:

* Խարբերդու մէջ կը հրատարակուի Լ-----էր օգտակար թերթը, Հայ-Կաթո-
ղիկէ եպիսկոպոսական փոխանորդ Դեր. Պաղտիկեան վ. ի կողմանէ: Հմուտ եւ տրամա-
բանական կուռ յօդուածներուն համար կը շնորհաւորեն խմբագրապետը:

* Պարսկաստանի մէջ Նոր-Զուղայր Հայ-Կաթողիկէ ժողովրդապետ կարգուեցաւ
Տ. Մարկոս Տէր-Թումանեան, որուն Ամենապ. Հոգեւոր Տէրն շնորհեց հարկաւոր արտօ-
նութիւնները:

ԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾԵՐ

* * Տարօրինակ եւ ցաւալի դէպք մը տեղի ունեցաւ Հայէջմիածնականաց երսփ. ժողովին անցեալ ուրբաթի նստին մէջ: Ինչու որ եկեղեցական երեսփոխաններէն Տ. Հըմայեակ եսպ վիրաւորուած ըլլալով թէ՛ իբր եկեղեցական ու թէ՛ իբր երեսփոխան՝ ժողովին Ատենապետին կողմէ, իր հրաժարականը բովանդակող գրութիւն մը ներկայացուցած էր: Բայց զարմանալին հոն է որ, ինչպէս այդ վիրաւորիչ խօսքերը եղած պահուն, ժողովականներ լուռ կը մնան. ու նախագահն անգամ չի համարձակիր բողոքել անոր դէմ, այս անգամ ալ այդ հրաժարագրին փոխանակ իմաստը ըմբռնելու կ'սկսին աջ ու ձախ քաշել քաշկուտել: Այս մասին Լ.---Բ.--- դառն զանգատներ ընելով կը յաւելիւ. «Այսքան ինկած է Հայ եկեղեցականին [իմա՛ Եկեղեցւոյն] արժանապատուութիւնը զգացումը:»

* * Բանկաթիի Գերեզմանատան պեղումները փութկոտ առաջ կը տարուին: Պատին քովէն հանուեցան Գասպար Ամիրալի թու՝ Պաղտասար Ամիրալի ոսկրտիրը: Նայնպէս գտնուեցաւ հարսանեկան քօղով գանկ մը, քօղը դեռ ճանաչելի վիճակի մէջ է. ինչպէս նաեւ 80 տարուան հնութիւն ունեցող 30ի մօտ գանկեր: Բայց է՛ն նշանակելի է Գարսաէֆէրիան ընտանիքէն 3 անձերուն գերեզմանները: Յիշեալ 3 անձերը ծանր ամբաստանութիւն տակ զլիաատուած ըլլալով, իրենց զլուխը ձեռքերնուն մէջ դրուած գտնուած են: Ահա ասոնց դամբարաններէն երկուքին արձանագրութիւնները, երրորդը անընթեռնի վիճակ մ'ունի:

Ա. Յասուկ սոսցող այս մեծ շիրմասան,
Եղեւ պապ սուրին որ կայ այս տապան,
Հոգեւոր այրն այն գրով արժուեցան,
Իրող յիշատակ սէրս Հայկազեան,
Եւ որ բնքեռնով զայս յատկ տապան,
Ի ծոց իւր ունեղ զՅարութիւն աղան,
Այսինքն Վանցի Ղարաւէժեւան,
Յէ՛նէն հայցեցէ՛ զողորմիս համայն:
Խուական Հայոց 1257 եւ փետ. 3:

Բ. Սյս նահասակ՝ յաղորդ վկայ,
Տեառն այս ազնիւ ծառայ,
Առեալ իւր յուս գիւր զվստեան,
Եւ զսուսեռ հոգւոյն զբան,
Եկաց բնդդեմ նախնի չարին,
Անեքեւոյք բռնաւորին:
Տիօք մանուկ էր եւ առոյգ,
Որ երող զայս կեանս անսոյգ,
Ոչ երկուցեալ ի սուսեռաց,
Եւ յահարկու զիմաց դահնաց,
Եհեղ զարիւնն վկայական,
Յակոբ յաղթողս այս բաջազուն,
Եղեւ սրբոց Մարտիրոսաց,
Հաղորդ փառացն մեր Հայկական,
Հագար հարիւր եւ չորս տան,
Ընդ որս եւ չորս յարազուգեալ,
Յորում վկայս եղեւ՝ ցուցեալ:
Հեղումն արեան սորս յերկրի,
Մեզ բարեխօս առ Տէր յիցի,
Որպէսզի յայն ամենայնի,
Մեզ համօրէն ողորմեսցի, ամէն:

Ն Ե Ր Ք Ի Ն Գ Ո Ր Ծ Ե Ր

* * Կրկնապատկեր լինելու դարձեալ կենսոտուած է, սպանութիւնները միշտ կը շարունակուին: Բ. Դուռ հասած լուրերէն կը հասկցուի թէ Մայիսայ գտնուող Անգլիական բոլոր մարտանաւերը Կրէտէ մեկնած են՝ խռովութիւն ծագած պարագային միջամտելու համար: Լուր կը շրջի թէ պաշտպան տէրութիւնը նոր ծանուցազիր մըն ալ պիտի տան հրաւիրելով Կղզիին կառավարութիւնը յարգել 1908ի օրէնքը:

* * Յոյն եկեղեցական շրջանակներուն մէջ մեծ յուզում մը կայ այս պահուս այն շրջած լուրին վրայ՝ թէ Ռուս եկեղեցին Պոլսի պատրիարքութենէն անջատելով Մոսկուայի մէջ Սլաւ պատրիարքութիւն մը հաստատելու համար Զարին առաջարկ մը եղած է Ռուս Սինոդոսէն: Նոյն ժամանակ մը իւրիւր, եւ կը յաւելու ըսելով թէ, զուցէ պաշտօնապէս հերժուած չլլայ, այլ սոսկ Մոսկուայի մէջ ալ նոր պատրիարքութիւն մը հիմնուի:

* * Երեսփոխ. ընտրութեանց մէջ իբր թէ շատ մը ապօրինութիւններ գործուած ըլլալու լուրերը հետզհետէ հասնելուն, Յունաց Սինոդը որոշեց միւս պատրիարքարաններու հետ միասին խորհուրդ ընելով, Թագրի մը գրել պատկանեալ պաշտօնատան՝ այդ դէպքերուն դէմ քողորքելու համար: Հայ Պատրիարքարանը մերժեց սակայն միջամտիլ, այս խնդրոյն պաշտօնապէս չխառնուելուն համար:

* * Ղաթաթիայի Գափագ երեքտրական երկաթուղիի մը 4 տարիէն շինուելու ծրագիրն ընդունուած է: Սոյն երկաթուղին պիտի անցնի Ազապ Դաքու, Թարլա Պաշի, Թագսիմ եւ անկէ Բանկաթի՝ կամուրջի մը վրայէն անցնելով, յետոյ 600 մետր. երկ. ուրիշ կամուրջ մը անցնելով պիտի երթայ Պէշկիթաշ ասկէ երթայ Օրթաքէօյ՝ 1540 մետր փապուղիի մը մէջէն, եւ յետոյ 720 մետր փապուղիի եւ 200 մետր կամուրջէ մը անցնելով պիտի երթայ Դուրուլչէշմէ: Եւ վերջապէս ծովեզերեայ գիւղերը քերելով պիտի յանգի մինչեւ Բումէլի Ֆէնէր: Սոյն գծին շինութեան ձեռնարկուն է Պէշկիթի Լէնց եւ Ընկ. տունը:

* * Բ. Դուռը մեծ տէրութեանց մէկ ծանուցագրին ի պատասխան յայտարարեց թէ Կրէտացի երեժփոխանները կրնան Աթէնք երթալ, բայց պայմանաւ սր չմասնակցին Հելլէն Խորհրդարանի աշխատութիւններուն. հակառակ պարագային ինք պիտի ստիպուի մէկդի թողուլ իր չափաւոր քաղաքականութիւնը:

* * Իտալիա կ'սպառնայ մօտ ատենէն Եգէականի մէջ ռմբակոծութիւններ ընել՝ եթէ հաշտութիւն չկնքուի: Այսպիսի գործողութեան մը դէմ ոչ Աւստրիան ոչ ալ Գերմանիա ուզած են բողոքել թէեւ Անգլիա առաջարկած էր ընելու Հռովմայ մօտ:

* * Նախարարաց խորհուրդը Զորեքշաքթի օրուան նիստին մէջ հետեւեալ որոշում մը տուած է: Մամուլի օրէնքը վերջնականապէս քննուելով, որոշուեցաւ որ ասկից վերջը հրատարակուելիք թերթի մը արտօնատէրը պիտի հարկադրուի հինգ հարիւր (500) ոսկի պահեողի ղեկ կառավարութեան մօտ: Նոյնը պարտաւորեալ են ընել նաեւ այն թերթերն որոնք արդէն արտօնութիւն ստացած են թէեւ, սակայն չեն հրատարակուած:

* * Իրիւնկէ-այեւայ տեղեր յաղթական կը հանդիսանայ թաղապետական ընտրութեանց մէջ:

* * Հինգշաքթի օր ելմտական տարեգլուխի առթիւ աւանդական տօնախմբութիւններ կատարուեցան:

* * Ռուսական դեսպան Զարիքովի տեղ կարգուեցաւ Պուրէշի դեսպան Պ. Տըկիրսը:

Մ Ի Զ Ա Զ Գ Ա Յ Ի Ն Կ Ե Ա Ն Ք

Մարտ 10ին Բէքինի մէջ տօնուեցաւ Եուան-Շի-Քայի Հանրապետութեան առ-
ժամեայ Նախագահի ընտրութիւնը: Այս առթիւ Եուան-Շի-Քայ կարգաց յայտարարութիւն
մը պարզելով նոր կառավարութեան ծրագիրը սահմանադրական սկզբունքներու վրայ
հիմնուած. եւ վերջացուց ըսելով թէ ինք պաշտօնէ պիտի քաշուի երբ տեւական նա-
խագահ մը ընտրուի նորահաստատ հանրապետութեան:

* * Բէլլ-Ե կը հեռագրուի թէ Կոմս Հէտէրվորի թագաւորին ներկայացուցած
է Դանիլին հրաժարականը զոր ան ընդունած է. ու նոյնին առաջարկով ժողովին նիս-
տերը յետաձգուած են մինչեւ նոր Դանիլին կազմուիլը:

* * Ուսլիսկէ ծերակոյտը ընդունած է Անգլիոյ եւ Ֆրանսայի հետ իրաւարա-
րութեան դաշնագրերը:

* * Քէլ-Ե-Ե [Նորվեկիա] թերթերը կը ծանուցանեն թէ Բասմանիայէ եկած
հեռագրերու համաձայն երկրախոյզ Ամունտսօն 1911 թեկտ. 17 ին Հարաւային Բեւեռ
հասեր է: Ճամբան ունեցած է մինչեւ 60 աստիճան ցուրտ գէրոյէն վար: Անգամ մը կե-
րակուր գտնելու համար իր ընկերոջ հետ ստիպուել է իրենց շուններուն 80ը մորթել:
Բեւեռը հարթ սառնադաշտ մըն է եղեր, ինչպէս Հիւսիսայինն: Գունագեղ հաւաւայզը
հիանալի է եղեր:

* * Գործադուր Գիրմանիոյ մէջ եւս մեծամեծ առաւելութիւններ կը ստանայ,
ահագին վնասներու հետեւութեամբ: 210,000 հանրագործներ դադրեցուցին աշխատու-
թիւնները եւ ծանր ծայրայեղութիւններ գործուեցան: Եւրոպայի մէջ հանքածուխը զար-
հուրիկ բարձրացումներ ունեցաւ:

* * Գրաքօվիայի մօտ երկու կառախումբեր իրարու բաղխեցան. 130 զոհ կայ:

* * Ամսոյս 14ին Հռովմէն կը հեռագրեն թէ իտալիոյ արքայական ամուլին վրայ
մահափորձ մը կատարուեցաւ, Անթոնիոյ Տալպա անունով 21 տարու երիտասարդի մը
կողմանէ, որ քնիկ Հռովմայեցի եւ արհեստով որմադիր է, զոդերու խումբի մը կը պատ-
կանի եւ անիշխանական (anarchiste) է: Երեք գնդակ պարպեց կառքին վրայ հազա-
րապետ Լանկ վիրաւորուեցաւ եւ ծիէն վար ինկաւ, եւ հիւանդանոց փոխադրուեցաւ:
Իսկ թագաւորն ու Թագուհին շարունակեցին իրենց ճամբան դէպ ի Բանթէոն, ուր կ'եր-
թային հոգեհանգստեան արարողութեան ներկայ գտնուելու համար: Արքայական ամուլը
խանդավառ ցոյցերու առարկայ եղաւ ժողովրեան կողմանէ: Քիչ ետքը թագաւորը բաց
ինքնաշարժ կառքով հիւանդանոց գնաց եւ հազարապետ Լանկն այցելեց: Դեպքանները
պալատ գացին շնորհաւորելու համար. հեռագիրներ կը հասնին վնասպետներէ:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ի Թ Ի Ի Ն

Մոսկովիէ (վերջ)	81
Հայկական խնդիրը (Osserv. Rom)	83
Վիքթորիոսի հարիւրամեակը	87
Հայ-կաթողիկէ Պատրիարքութեան խնդիրը	90
Տեղեկագրակաճ	91

Ա Ր Տ Օ Ն Ա Տ Է Ր
ՅՈՎԶ. Մ. Վ. ԿԵՏԻԿԵԱՆ



ՏԵՐԵՆ-ԽԱՐԱԳՐԱՎԵՆ
ԳԷՈՐԳ Մ. ՎՐԴ. ԹԷՐԶԻՊԱՇԵԱՆ

Տպագր. Ռ. ՍԱՆԱԵԱՆ
Կալարա Բուրժուելու խան

ՊԱՏԱՍԻԱՆՆԵՐ

ԱՆԿԻՒՐԻԱ. Գերյ. Յ. Մ. Վ. Պ. Շնորհապարտ ենք Ձեր բարկացականութեան և եռանդեան: Օգտուեցանք Ձեր գրութենէն: **ՊԻԼԷՃԻԿ.** Գերյ. Գ. Մ. Վ. Ա. Մեծաւ գոհունակութեամբ ընդունեցանք Ձեր պատուականը. սիրով թարգմանի հրատարակենք:

ԱՏԱՆԱ. Գերյ. Յ. Վ. Խ. և Յ. Պ. Մեր սնունդ շնորհակալութիւնները. պատասխանեցինք Ձեր նամակներուն:

ԿԱՐԻՆ. Կ. Ե. Ք. Խորին յարգանք և շնորհակալութիւն: Պիտի ջանանք գոհացնել զՁեզ:

ԹԻՖԼԻՍ. Գ. Է. Գոհացուցիչ է Ձեր առաջարկը: Թերթիս ուղղութեան համաձայն գրուած լաւ յօդուածները սիրով կ'ընդունինք:

ԿԵՍԱՐԻԱ. Վ. Վ. Ձեր գեղեյիլ նկարագրական յօդուածին յառաջանը՝ թէև արդարացի դիտողութիւններով չի, սակայն, առ փախկան լափութեան, սխալ չ'էրեւանք նորութեամբ հրատարակել:

ԿԱՐԵԻՈՐ

Մեր հին լուսավորչաց կը շարունակենք ղրկել Կարօղիկէ Անապատի թիւերը: Սակայն պէ՛տք կը զգանք յայտարարել թէ այլևս պիտի ղադրեցնենք ղրկելու անոնց որ չեն փութար լուսավորչ գրուիլ: Հետեւեալ անոնք որ կ'ուզեն ունենալ այս օգտակար քերթը, հաճին փութով իրենց լուսավորչագիրը հասցընել քերթիս Տնօրէնութեան:

«Բաժնեկիներն կ'առարարին Տնօրէն-Խմբագրատնոց Գէորգ Ի. Վ. Թէրզիպաշեանի հասցէին»:

ԱՊՐԵՐ

Աթոռանիստ Ս. Աստուածածին Եկեղեցւոյ մէջ (Բերա, Սազըզ-Աղաճ) Զոր օրերու թիւ պատարագաց ժամերն են. 7, 8, 9, 10 եւ իսկ կիրակի ու տոն օրերը՝ ժամը 7.30, 8.30, 9.30, 10.30 եւ 11.30-ը կը մատուցուին Ս. Պատարագները:

Սոյն Մեծ Պահոց ամէն Ուրբաթ առաւօտ եօթն ժողի ջերմեղանկութիւնը կը կատարուի եւ օրհնութիւն կը տրուի ի ժամ 9.30: Իսկ Կիւրակէ օրեր, ԵՐԵՎԱՆԻ ԺԱՄԵՐԳՈՒԹԻԻՆ, ԲԱՐՈՋ՝ Թուրքերէն լեզուաւ եւ Օրհնութիւն տեղի կ'ունենայ ի ժամ 4:

Քարոզիչն է Գեր. ՄԱՏԹ. Ի. Վ. ԳԱՐԱԿԷՕԶԵԱՆ